# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

20.01.2016թ. կնքված «ՊԳԿՎ-2016-ԲԸԱՀ-1» պայմանագրի

ք. Երևան «27» սեպտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը, (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4) այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս Վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վահագն Հարությունյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա և որի անունից համաձայն 26.09.2016թ. տրված լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ Դիանա Գրիգորյանը (անձնագիր՝ AK0573998, տրված՝ 26.07.2010թ. 004-ի կողմից, հասցե՝ ք.Երևան, Փափազյան 13շ. բն.57), մի կողմից և «Հանարդնախագիծ» բաց բաժնետիրական ընկերությունը (հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4, պետական գրանցման համարը՝ 286.130.05566, գրանցման ամսաթիվը՝ 01.12.2004թ., վկայական՝ 03 Ա 066836), այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս տնօրեն Արայիկ Հարությունյանի (նույնականացման քարտ 000954255, տրված՝ 22.01.2013թ., 046-ի կողմից, բնակության վայրը՝ ք. Եղվարդ, Ազատամարտիկների 2), որը գործում է կանոնադրության հիման վրա մյուս կողմից կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

Սույն համաձայնագիրը կնքվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 08-ի N 925-Ն որոշումը և 20.01.2016թ. կնքված «ՊԳԿՎ-2016-ԲԸԱՀ-1» պայմանագրի 9.3 կետը ։

## 1. Համաձայնագրի առարկան

1. Պայմանագրի 1.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ոչ բնակելի տարածք, այսուհետ՝ «Օբյեկտ», որը գտնվում է ՀՀ ք. Երևան, Տիգրան Մեծի 4 հասցեում գտնվող շենքում: Օբյեկտի ընդհանուր մակերեսը մինչև 2016 թվականի հուլիսի 19-ը կազմում է 2150 (երկու հազար հարյուր հիսուն) քառակուսի մետր (գծանշված է Հավելված 1-ում), իսկ 2016 թվականի հուլիսի 19-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 1750 (մեկ հազար յոթ հարյուր հիսուն) քառակուսի մետր ( գծանշված է Հավելված 1.1-ում):»

2. Պայմանագրի 1.2 կետում նշված «թիվ 1 Հավելվածում» բառերը փոխարինել «թիվ 1 և 1.1 Հավելվածներում» բառերով:

3. Պայմանագրի 2.4.1 կետում «127297200» (մեկ հարյուր քսանյոթ միլիոն երկու հարյուր իննսունյոթ հազար երկու հարյուր) բառերը փոխարինել «116601561» (մեկ հարյուր տասնվեց միլիոն վեց հարյուր մեկ հազար հինգ հարյուր վաթսունմեկ) բառերով:

4.Պայմանագրի 3.1 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

Օբյեկտի վարձավճարի գումարը 01.01.2016թ.-19.07.2016թ. կազմում է 69808142 (վաթսունինն միլիոն ութ հարյուր ութ հազար մեկ հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն), 19.07.2016թ.-31.12.2016թ. կազմում է 46793419 (քառասունվեց միլիոն յոթ հարյուր իննսուներեք հազար չորս հարյուր տասնինն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն): Օբյեկտի վարձավճարի ընդհանուր գումարը կազմում է 116601561 (մեկ հարյուր տասնվեց միլիոն վեց հարյուր մեկ հազար հինգ հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ, (ներառյալ ԱԱՀ-ն)»:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրն օրինական է միայն այն դեպքում, եթե այն ստորագրված է Կողմերի կողմից, վավերացված է նոտարի կողմից և գրանցված է անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

2.4 Կողմերը հաստատում են, որ վարձակալած 2150 (երկու հազար հարյուր հիսուն) քառակուսի մետր մակերեսով տարածքից 400 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով տարածքը Վարձակալի կողմից 19.07.2016թ. հանձնվել է Վարձատուին՝ համաձայն Հանձնման-ընդունման ակտի:

2.5 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ, մեկ օրինակը պահվում է ԿԵՆՏՐՈՆ նոտարական տարածքի նոտարական գործում, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ գրանցելու համար: Համաձայնագրի օրինակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Վարձատու | Վարձակալ |
|---|---|
| «Հանարդնախագիծ» ԲԲԸ | ՀՀ ԿԱ ՊԳԿ վարչություն |
| ք. Երևան, Տիգրան Մեծի 4 | ք. Երևան, Տիգրան Մեծի 4 |
| «Անելիք Բանկ»ՓԲԸ | ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն |
| Հ/Հ 11800038047700 | Հ/Հ 900011145027 |
| ՀՎՀՀ 02507379 | ՀՎՀՀ 02528489 |
| Տնօրեն՝ | Աշխատակազմի ղեկավար՝ |
| Արայիկ Հարությունյան | Վահագն Հարությունյան |
| ________________ | ________________ |

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՎԵՑ ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՔՍԱՆՅՈԹԻՆ

սույն համաձայնագիրը վավերացվել է իմ` Երևան քաղաքի Կենտրոն նոտարական տարածքի նոտար` ԷԼՄԻՐԱ ԳԵՎՈՐԳԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՍ կողմից:

Սույն համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, նրանց գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունը և նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված և պարզված են:

ՀՀ քաղ. օր. 301 հոդվածի համաձայն, սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում 30 աշխատանքային օրյա ժամկետում:

Սույն համաձայնագիրը ենթակա է գրանցման համապատասխան մարմնում:

Գրանցված է սեղանամատյանում 9133 ով

Գանձված է պետ. տուրք և ծառայության վճար համաձայն

ՀՀ «Պետ.տուրքի մասին և Նոտարիատի մասին» օրենքների

Նոտար` ----------------------------

# ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

ԹԵՐԹԻԿ N 2

Մասշտաբը

## I. ՀԱՐԿ




ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ԵՍԱՅԱՆ

ՉԱՓՈՂ Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

N 2570465

ՀԱՏԱԿԱԳԻԾ

II ՀԱՐԿ



Ստորաբաժանման ղեկավար ... ՏԵՐՅԱՆ

Կազմող Դ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2804234

ՀԱՏԱԿԱԳԻԾ

III ՀԱՐԿ



2804384